• ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ•

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնում իրականացվում է նախնական մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ «Ոստիկան» և «Պարեկ» որակավորումների եռամյա և հինգամյա ուսումնական դասընթացներ:

Ուսումնական կենտրոն կարող են ընդունվել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող, պարտադիր զինվորական ծառայություն անցած /արական սեռի դիմորդների համար/ մինչև 35 տարեկան ՀՀ քաղաքացիները:

Ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքներով: Դիմորդներն անցնում են թեստային եղանակով մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգում և ֆիզիկական պատրաստականության ստուգում:

Սովորողներն ուսման ամբողջ ժամանակահատվածում վարձատրվում են Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

Նախնական մասնագիտական կրթության ուսումնական դասընթացն ավարտածները նշանակվում են ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններում:

Կրթահամալիրի ուսումնական կենտրոնում կազմակերպվում են նաև.

•Ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների որակավորման բարձրացման դասընթացներ:

•Նախնական մասնագիտական կրթության «Պահնորդ» և «Թիկնապահ» որակավորման վճարովի ուսուցման դասընթացներ՝ մասնավոր կազմակերպությունների աշխատակիցների և անհատ քաղաքացիների համար:

•Վճարովի ուսուցման դասընթացներ՝ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատակիցների համար:

Դարձիր իրավաբան վճարովի ուսուցման ծրագրերով

Բակալավրի կրթական ծրագրով առկա վճարովի ուսուցմամբ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետ ընդունվելու համար կարող են դիմել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող անձինք:

Ուսման տևողությունը 4 տարի է: Առկա վճարովի ուսուցման արական սեռի սովորողները չեն օգտվում «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով նախատեսված տարկետման իրավունքից: Ուսման կիսամյակային վարձավճարը 250 000 դրամ է:

Դիմորդներն ընդունելության քննություններ են հանձնում մրցութային երկու առարկաներից՝

- հայոց լեզու (թելադրություն),
- հայոց պատմություն (թեստ):

Դիմորդն իր ցանկությամբ կարող է հանձնել միայն «Հայոց լեզու» առարկայի քննությունը՝ փաստաթղթերի հետ ներկայացնելով նաև «Հայոց պատմություն» առարկայի միասնական քննությունը հանձնելու վերաբերյալ «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված վկայագիրը (բնօրինակը):

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար այցելեք ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կայքէջ

edupolice.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Հիմնավոր գերելիքով դեպի արժանապատիվ ծառայություն

ԱԿԱԴԵՄԻԱ

ՔՈԼԵՋ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

www.edupolice.am +(374)-10-772047
info@edupolice.am +(374)-10-770682
Երևան, 0004, Ծովակալ Իսակովի պող. 29

• ՄԵՐ ՄԱՍԻՆ •

ՀՀ ոստիկանությունում ընթացող բարեփոխումների արդյունքում 2011 թվականին կազմավորվեց «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որի կառուցվածքային ստորաբաժանումներն են ակադեմիան, քոլեջը և ուսումնական կենտրոնը:

Կրթահամալիրում գործում է բարձրագույն մասնագիտական կրթության երկաստիճան համակարգ՝ բակալավրիատ և մագիստրատուրա, իրականացվում է հեռակա ուսուցմամբ հետբուհական մասնագիտական կրթություն, ինչպես նաև նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսուցում:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում պետական պատվերի շրջանակներում հեռակա ուսուցման ձևով իրականացվող ասպիրանտուրա կարող են դիմել դիպլոմավորված մասնագետի որակավորում կամ մագիստրոսի աստիճան ունեցող և առնվազն 2 տարի ոստիկանության միջին, ավագ, գլխավոր կամ բարձրագույն խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողները:

Կրթահամալիրում գործում է վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետը, որտեղ իրականացվում է ոստիկանության, ինչպես նաև այլ իրավապահ մարմինների և քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններ զբաղեցնող աշխատակիցների վերապատրաստման և որակավորման բարձրացման գործընթացը:

Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմը համալրված է գիտության տարբեր ոլորտների բարձր որակավորում ունեցող մասնագետներով ու գիտնականներով:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրն ունի ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած լսարաններ և մասնագիտացված ուսումնական կաբինետներ: Կրթահամալիրի տարածքում գործում են 4 մարզասրահներ և լողավազան:

Կրթահամալիրը սերտ համագործակցում է ԱՊՀ և Եվրոպայի մի շարք երկրների ոստիկանական ուսումնական հաստատությունների հետ:

• ԱԿԱԴԵՄԻԱ •

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության, հեռակա ուսուցման ֆակուլտետներում և մագիստրատուրայի բաժանմունքում իրականացվում է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերով ուսուցում:

•Իրավագիտության ֆակուլտետն իրականացնում է բակալավրի կրթական ծրագրով «Իրավագիտություն» մասնագիտությամբ առկա անվճար ուսուցում ոստիկանական կադրերի համար, ինչպես նաև առկա վճարովի ուսուցում քաղաքացիական անձանց համար: Ուսման տևողությունը 4 տարի է:

Անվճար հիմունքներով ուսումնառության համար կարող են դիմել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող, պարտադիր զինվորական ծառայություն անցած /արական սեռի դիմորդների համար/ մինչև 35 տարեկան ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև առնվազն մեկ տարի ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող մինչև 35 տարեկան ծառայողները:

Ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքներով: Անվճար ուսուցման դիմորդներն անցնում են թեստային եղանակով հայոց լեզվի իմացության ստուգում, մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգում, ինչպես նաև ֆիզիկական պատրաստականության ստուգում:

Ֆակուլտետի շրջանավարտներին շնորհվում է իրավագիտության բակալավրի աստիճան, իսկ անվճար ուսուցման շրջանավարտներին՝ նաև ոստիկանության լեյտենանտի կոչում, և վերջիններս նշանակվում են ոստիկանության միջին խմբի պաշտոններում:

Սովորողներն ուսման ամբողջ ժամանակահատվածում վարձատրվում են Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

•Հեռակա ուսուցման ֆակուլտետն առնվազն 2 տարի ոստիկանության կրտսեր, միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար իրականացնում է բակալավրիատի կրթական ծրագրով հեռակա անվճար ուսուցում, որի արդյունքում նրանց շնորհվում է իրավագիտության բակալավրի աստիճան:

•Մագիստրատուրայի բաժանմունքն իրականացնում է «Իրավագիտություն» մասնագիտությամբ մագիստրոսի կրթական ծրագրով առկա անվճար և հեռակա (անվճար և վճարովի) ուսուցում: Առկա ուսուցման տևողությունը 2 տարի է, իսկ հեռակա ուսուցմանը՝ 2,5 տարի:

Մագիստրատուրայի շրջանավարտներին շնորհվում է իրավագիտության մագիստրոսի աստիճան:

• ՔՈԼԵՋ •

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջում իրականացվում է «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ միջին մասնագիտական կրթական ծրագրով առկա ուսուցում: Ուսման տևողությունը 2 տարի է:

Քոլեջ կարող են ընդունվել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող, պարտադիր զինվորական ծառայություն անցած /արական սեռի դիմորդների համար/ մինչև 35 տարեկան ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև առնվազն մեկ տարի ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող մինչև 35 տարեկան ծառայողները:

Ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքներով: Դիմորդներն անցնում են թեստային եղանակով հայոց լեզվի իմացության ստուգում, մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգում, ինչպես նաև ֆիզիկական պատրաստականության ստուգում:

Սովորողներն ուսման ամբողջ ժամանակահատվածում վարձատրվում են Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

Քոլեջի շրջանավարտներին շնորհվում է ոստիկանության սպայի որակավորում, ինչպես նաև ոստիկանության լեյտենանտի կոչում: Նրանք նշանակվում են ոստիկանության համապատասխան ծառայությունների տեսչական պաշտոններում: